

**ԱՁԱՏ ԲԵՍ**

**ԴԱՐՁԵԱԼ ՄԱՍՈՒԼԻ ԵՒ ԿԱՐԾԻՔԻ  
ԱՁԱՏՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ**

ՀԱՅԿՆԱԳԳԱՇԵԱՆ

(Հատուած)

Կուսակցութիւններու, միութիւններու կամ անհատներու նեցուկով ու զոհողութեամբ մամուլի բաւական լայն ցանց մը ունինք Սփիւռքի մէջ:

Անոնց կարգին իր պատուոյ տեղը ունէր Ռ.Ա.Կ. Արեւմտեան Միացեալ Նահանգներու Օրկան «Նոր Օրը», որուն համար կարելի է ըսել, թէ մեր լաւագոյն շաբաթաթերթերէն մէկն էր: Ունէր լաւ խմբագիր եւ աշխատակիցներու ընտիր փաղանգ մը: Սակայն, լանկարծ, փոքրիկ «պետական հարուած»ով մը խմբագիրը պաշտօնանկ եղաւ՝ տեղը տալով խմբագրական մարմնի մը: Եղածը դուրսէն եւ հեռուէն դիտելով մարդ կը խորհի, թէ նման անակնկալ փոփոխութիւն մը երկուհիմնական պատճառ կրնայ ունենալ՝ տարիքային ու որակային: Նկատի ունիմ որ պաշտօնանկ խմբագիրը շուրջ եօթնասուն տարեկան է, սակայն կարդալով զինք փոխարինող խմբագրական կազմի անունները՝ իրմէ աւելի երիտասարդը չեմ տեսներ: Որակի մասին խօսելով, այդ մարդին մէջ եւս չեմ տեսներ ոեւէ մէկը, որ աւելի որակաւոր ըլլար հրապարակագրական ու խմբագրական մարդի մէջ, քան պաշտօնանկ խմբագիրը: Ուրեմն, ինչ պատճառ կար այս փոփոխութեան: Ի հարկէ, կարելի չէ գանց ընել անհատական տարակարծութիւններն ու ճշմիմ փառասիրութիւնները, որոնք սակայն բաւարար պատճառ չէին այս «պետական հարուածին»: «Նոր Օր»էն դժգոհ անձեր ու կողմեր կային, որոնք անհանգիստ կը զգային հոն հրատարակուող կարգ մը յօդուած-

ներէ: Այո՛, վերջին շրջանին Մելգոնեան կրթական Հաստատութեան փակուածը ազգային հարցի մը վերածուած էր եւ յաճախ գրութիւններ կը հրատարակուէին այդ մասին: Այդ յօդուածները բացարձակ մեծամասնութեամբ կը դատապարտէին փակուածը հրահանգող Հ.Բ.Ը. Միութեան ներկայ ղեկավարութիւնը: Խմբագիրը ինք ալ դէմ էր փակումին: Ի վերջոյ, կարծիքի եւ մամուլի ազատութենէն խմբագիրներն ալ կրնան օգտուիլ:

Եւ ահա ազատութիւն ճգնող լախոր իջաւ նաեւ «Նոր Օր»ի խմբագրի գլխուն:

Ողբերգութիւն է անշուշտ, բայց զարմանալի բան չկայ:

Ազգային որեւէ ողջմիտ կազմակերպութիւն, հայու հոգի ունեցող ոեւէ անհատ, կրթութեան ու մշակուցի հաւատացող ոեւէ հայ չի կրնար համակարծիք ըլլալ Մելգոնեանի պէս փառաւոր անցեալ ունեցող Հաստատութեան մը փակումին, որուն առջեւ ծառայութեան աւելի մեծ դաշտ ստեղծուած է Կիպրոսի Եւրոպական Համայնքին միանալովը: Այս առթիւ «Նոր Օր»ի խմբագրին պատահածը մամուլի եւ կարծիքի ազատութեան կոպիտ օտնահարումն է, որ դէմ է Ռամկավար Ազատական կուսակցութեան աւանդութեանց ու դաւանանքին, եւ անմիջականօրէն պէտք ունի սրբազրութեան: